ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթների

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության **«Դարբասի առողջության կենտրոն»** և **«Գորայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների** թափուր պաշտոնները զբաղեցնելու համար:

Կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1. Բարձրագույն բժշկական կրթություն՝ ներքին հիվանդություններ (թերապիա), կամ մանկաբուժություն կամ ընտանեկան բժշկություն մասնագիտությամբ, հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, չի լրացել հավակնորդի 65 տարին:

2. Մրցույթները կանցկացվեն՝

«Դարբասի առողջության կենտրոն» ՊՈԱԿ –
2025 թվականի հունվարի 24-ին ժ. 10:00–ին

«Գորայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-
2025 թվականի հունվարի 24-ին ժ. 15:00–ին:

3. Մրցույթին մասնակցելու համար դիմումատուները Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատազմ են ներկայացնում՝

1) դիմում, որում նշվում է հավակնորդի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում), հաշվառման և բնակության վայրը, հեռախոսահամարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն (դրանց առկայության դեպքում).

2) մեկ լուսանկար 3 x 4 չափի.

3) աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ.

4) ինքնակենսագրություն.

5) անձը հաստատող փաստաթղթի պատճեն.

6) բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի հավակնորդի դեպքում՝ նաև պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու կամ տարկետման մեջ գտնվելու փաստը հավաստող փաստաթղթի) պատճեն.

7) տեղեկանք՝ դատվածության, դատվածությունը հանված կամ մարված լինելու

երաբերյալ (Արտաքին գործերի նախարարությունից).

8) տեղեկանք՝ սնանկության կամ դրա բացակայության վերաբերյալ (Պետական եկամուտների կոմիտեից).

9) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիվանդությունների բացակայության վերաբերյալ. (արտահիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունից, որտեղ համապատասխան կարգով կցագրված է դիմումատուն).

10) հավակնորդի ցանկությամբ՝ հրատարակված գիտական հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.

11) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (ըստ դիմումատուի ցանկության).

12) Կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգը (ներկայացվում է մրցույթի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ, ինչի վերաբերյալ կազմվում է հանձնման-ընդունման ակտ), որը ներառում է Կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև Կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, Կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները:

4. Հավակնորդը փաստաթղթերը ներկայացնում է առձեռն կամ առցանց՝ բացառությամբ Կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգի, որը ներկայացվում է առձեռն:

5. Առձեռն փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, բացի ոչ աշխատանքային օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

Մրցույթը կկայանա Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի շենքում (գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ, Կապան քաղաք, Գ. Նժդեհի 1): Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազ (ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Գ.Նժդեհ 1 շենք, Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն, հեռ.՝ (0285) 4-42-75, հարցաշարին ծանոթանալու համար՝ հեռ. (0285) 4-35-10):